ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահ
Մամլո հաղորդագրություն
05.11.2015

## HAYP 5.0՝ «ՄՈՒՏՔԸ ՍԻԳԱՐԵՏԻ ԽԱՆՈՒԹԻՑ»

ՀԱՅՓ Փոփ Ափ Պատկերասրահը ներկայացնում է
ՍԱՄՎԵԼ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ
Անձնական և Քաղաքական Պրոտեստի Ազդանշաններ շարքը




Նոյեմբեր 6-16, Միստի Ֆյումս (Misty Fumes)
էլեկտրոնային սիգարետների խանութ:
Թումանյան 18 (Նալբանդյան փողոցի հետ հատման մոտ), Երևան:
Բացման երեկո՝ ուրբաթ, նոյեմբեր 6, 19:00, DJ և գինի
Բաց կլինի ամեն օր՝ 16:00 - 21:00
Մուտքն ազատ է
*Այս ցուցադրությունը չափահասների համար է նախատեսված: Այն պարունակում է անպարկեշտ բառեր:

## Ի՞նչ է ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահը

ՀԱՅՓ-ը փոփ-ափ պատկերասրահ է, որը կազմակերպում է ժամանակավոր ցուցահանդեսներ Հայաստանի տարբեր վայրերում՝ անսպասելի վայրերում, օրինակ՝ խանութի դատարկ տարածքներում, վարձույթի համար նախատեսված շենքերում կամ լքված գործարաններում: Մենք հույս ունենք, որ կկարողանանք հնարավորություն տալ սկսնակ արվեստագետներին՝ յուրօրինակ ցուցադրության մոդելի և դինամիկ ծրագրավորման շնորհիվ ներգրավել տարբեր համայնքների, ինչպես նաև փոխել տարածության և արվեստի փոխակերպող պոտենցիալի ըմբռնումը:

## «ՄՈՒՏՔԸ ՍԻԳԱՐԵՏԻ ԽԱՆՈՒԹԻՑ» Նոյեմբեր 6-16, 2015

> *« Սադրիչ, էքսցենտրիկ և խաղային, միշտ հակասական և երբեք ոչ անտարբեր: Ահա այսպես ես կնկարագրեի Երևանում ծնված արվեստագետի՝ Սամվել «Սագա» Սաղաթելյանի աշխատանքները: »*
>
> *Աննա Կ. Գարզարյան*, Համահիմնադիր, գործադիր և ստեղծագործական տնօրեն

«ՄՈՒՏՔԸ ՍԻԳԱՐԵՏԻ ԽԱՆՈՒԹԻՑ» -ը ՀԱՅՓ Փոփ Ափ Պատկերասրահի հինգերորդ ցուցահանդեսն է, մեր վերջինը՝՝ 2015-ում (սպասեք ավելին հաջորդ տարի): Այն նաև մեր առաջին սոլո ցուցադրություննն է: Ցուցադրություն բնութագրում է Սամ Սագայի գրաֆիկական աշխատանքները «Քաղաքական և անձնական բողոքի նշաններ» շարքից: Երկու նմուշներ ցուցադրվեցին ՀԱՅՓ-ի՝ Աբովյան փողոցի տարածքում ապրիլին «ԱՆԿԱՊիտալ» խմբակային ցուցահանդեսի ժամանակ: Ամբողջական շարքը ցուցադրվել էր առաջին անգամ Մայիս ամսին՝ Բեվերլի Հիլզի Գարբուշյան Ցուցասրահում: Այն

ստացավ մեծ ուշադրություն մամուլի կողմից: Հիմա, առաջին անգամ Հայաստանում Սամվելի բողոքի նշանները, մի շարք նոր նմուշներով կցուցադրվեն ՀԱՅՓ Փոփ Ափ Պատկերասրահում:

Ազդանշանները հայերեն և անգլերեն արտահայտությունների գունեղ խառնուրդ են՝ գրաֆիկական-կոնստրուկտիվ ձևով արտահայտված: Դրանք գրաֆիկորեն մինիմալիստականնեն և գաղափարի տեսանկյունից՝ բարդ: Դրանց ասելիքը համարձակ է, երբեմն՝ էրոտիկ, երբեմն էլ՝ քաղաքական: Սամվելը պրովոկացիա է առաջացնում:

Ցուցադրությունը տեղի կունենա Միստի Ֆյումս (Misty Fumes) կուլիսների հետևում, Երևանի գերժամանակակից (ամենաառաջին) էլեկտրոնային սիգարետների խանութում: Տարածքը մտերմիկ է, վերացական և հատուկ հասուն հանդիսատեսի համար, պատշաճ մթնոլորտ՝ ստեղծարար ցուցադրության համար: Ճաշակով ձևավորած ֆրանսիացի սեփականատեր Քրիստոֆ Մյուրիի կողմից՝ այս հիփսթեր խանութն ունի ուրբանիստական ոգի, որը համապատասխանում է Սամ Սազայի բանավեճայինաշխարհին, ում «բողոքը» մարտահրավեր է՝ նետված դեպի հանդիսատեսի հարմարավետության գոտի:

## Կապ ՀԱՅՓ Փոփ-Ափ

**ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահը**
info.hayp@gmail.com
www.haypopup.wordpress.com
facebook.com/haypopup
twitter.com/haypopup
instagram.com/hayp_pop_up

Ստեղծագործական բովանդակության և գործառնությունների համար
**Աննա Գարգարյան**
Համահիմնադիր, գործադիր և ստեղծագործական տնօրեն
099.741.626
anna.gargarian@gmail.com

Միջոցառումների համակարգման համար
**Շառլոթ Պուլեյն**
Համահիմնադիր, ծրագրերի ղեկավար և հաղորդակցության համակարգող
077.177.452
ckpoulain@gmail.com